ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

12 դեկտեմբերի 2025 թվականի թիվ 145-Ա

ք. Երևան

«ԱԼՖԱ ՄԵԴԻԱ ՀԱՈՒԶ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով 2025 թվականի նոյեմբերի 13-ին իր նախաձեռնությամբ հարուցված թիվ 58 վարչական վարույթի նյութերը, *պարզեց*.

Հանձնաժողովն իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս 2025 թվականի նոյեմբերի 13-ին տեսալսողական մեդիածառայություն մատուցող «ԱԼՖԱ ՄԵԴԻԱ ՀԱՈՒԶ» ՍՊ ընկերության (այսուհետ նաև՝ Հեռարձակող կամ Ընկերություն) կողմից հեռարձակվող «ԱԼՖԱ ՆՅՈՒԶ» տեսալսողական ծրագրի (այսուհետ նաև՝ Ծրագիր) 2025 թվականի նոյեմբերի 12-ի տեսագրության մշտադիտարկման արդյունքում հայտնաբերել է «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթի պահանջի առերևույթ խախտման հատկանիշներ:

Հանձնաժողովը, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 2025 թվականի նոյեմբերի 13-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է թիվ 58 վարչական վարույթը:

Վարչական վարույթի հարուցման համար հիմք է հանդիսացել Հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության կողմից 2025 թվականի նոյեմբերի 13-ին կազմված մշտադիտարկման իրականացման և արդյունքների վերաբերյալ արձանագրությունը (այսուհետ նաև՝ Արձանագրություն), ըստ որի՝ «ԱԼՖԱ ՆՅՈՒԶ» տեսալսողական ծրագրի անվանումը 2025 թվականի նոյեմբերի 12-ին նշվել է օտար լեզվով՝ «alpha news», առանց հայերեն տառադարձության:

Օրենքի 42-րդ հոդվածի 18-րդ մասի համաձայն՝ արձանագրությունը կարող է հիմք հանդիսանալ վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայում է որպես վարչական վարույթի ապացույց:

Հանձնաժողովը 2025 թվականի նոյեմբերի 14-ին թիվ Ե/04/04.1/910-25 գրությամբ Հեռարձակողին ծանուցել է հարուցված թիվ 58 վարչական վարույթի մասին և տեղեկացրել, որ տվյալ հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումներն ու բացատրությունները:

Հեռարձակողը նշված գրությանն ի պատասխան 2025 թվականի նոյեմբերի 20-ին Հանձնաժողով է ներկայացրել իր պարզաբանումները՝ մասնավորապես նշելով.

«(...) «»ԱԼՖԱ ՄԵԴԻԱ ՀԱՈՒԶ» ՍՊԸ-ն 2024 թվականի հոկտեմբերի 10-ին, ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակից ստացել է

ապրանքային նշանի գրանցման No 40675 վկայագիրը, որով իսկ գրանցվել է "Alpha news" ապրանքային նշանը (Վկայագրի պատճենը կցվում է:) Համաձայն "Ապրանքային նշանների մասին" ՀՀ օրենքի դրույթների, ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի "Ապրանքային նշանների պետական գրանցամատյանի վարման եվ քաղվածքների տրամադրման, կոլեկտիվ նշանը կամ դրա հայտը համապատասխանաբար անձի ապրանքային նշանի կամ ապրանքային նշանի հայտի եվ հակառակը փոխակերպելու, ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու եվ քննարկելու, ապրանքային նշանների լիցենզիաները, դրանց փոփոխությունները եվ չեղյալ հայտարարելը գրանցելու մասին դիմումները լրացնելու, ներկայացնելու եվ քննարկելու, ապրանքային նշանների գրանցման գործողության ժամկետի երկարաձգման մասին դիմումների ձեվակերպման եվ քննարկման կարգերը հաստատելու մասին" No 1538-Ն որոշման II-րդ մասի 7-րդ հոդվածի 16-րդ կետի "պետական գրանցամատյան են տեղափոխվում հետևյալ մատենագիտական տվյալները՝ ..... 16) (561) ապրանքային նշանի հայերեն տառադարձությունը.":

Հաշվի առնելով վերոնշյալը, և նկատի ունենալով որ ապրանքային նշանի գրանցման No 40675 վկայագրում չկա նշված հայերեն տառադարձությունը, մենք դիտարկել ենք և տեղադրել ենք մեր ընկերության ապրանքային նշանը այնպես ինչպես գրանցված է վկայագրում:

Նկատի ունենալով Ձեր 14.11.2025 թվականի No Ե/04/04.1/910-25 ծանուցմամբ ներկայացված օրենսդրական կարգավորումները, սույնով տեղեկացնում ենք Ձեզ, որ էկրանային ցուցադրման ժամանակ տեղադրված անվանումը, անկախ նշված իրավական հիմնավորումներից փոփոխվել և լրացվել է ծանուցման համապատասխան (Ապացույցը կցվում է թվային սկավառակով):»:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«1. Հայաստանի Հանրապետության տեսալսողական մեդիայի մասին օրենսդրությունը ներառում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենքը, «Զանգվածային լրատվության մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», «Լեզվի մասին», «Գովազդի մասին» օրենքները, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը, կարգավորող պետական մարմնի իրավական ակտերը, տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող այլ իրավական ակտեր և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը:»:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 23-րդ կետերը սահմանում են.

1) տեսալսողական մեդիածառայություն մատուցող (այսուհետ՝ Հեռարձակող, լսողական մեդիածառայություն մատուցող՝ Լսողական ծրագրեր հեռարձակող) Հայաստանի Հանրապետության հիմնադրած կազմակերպություն կամ կարգավորող պետական մարմնի հեղինակազորած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը կազմում և սպառողին է ներկայացնում տեսալսողական տեղեկատվություն և խմբագրական պատասխանատվություն է կրում տեսալսողական արտադրանքի բովանդակության համար:

23) հեղինակազորում՝ կարգավորող պետական մարմնի կողմից ֆիզիկական կամ իրավաբանական անձին Հեռարձակողի կարգավիճակ տրվող փաստաթղթի տրամադրում.»:

Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հեռարձակողների անվանումներն էկրանային ցուցադրման ժամանակ օտար լեզուներով օգտագործելու դեպքում հայերեն անընդհատ տառադարձությունը պարտադիր է:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովն իրականացնում է Հեռարձակողների և օպերատորների գործունեության մշտադիտարկում:

Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով, իսկ նույն հոդվածի 8-րդ և 9-րդ մասերը սահմանում են.

«8. Մշտադիտարկման արդյունքներով կարգավորող պետական մարմնի ներկայացուցիչը մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ կազմում է արձանագրություն:

9. Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրության մեջ նշվում են մշտադիտարկման արդյունքների համառոտ շարադրանքը, ինչպես նաև վարչական վարույթ հարուցելու կամ հարուցված վարչական վարույթի համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստական հանգամանքները, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:»:

Օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«1. Իրավաբանական կամ ֆիզիկական անձը Հեռարձակողի կարգավիճակ ստանալու համար կարգավորող պետական մարմին է ներկայացնում հեղինակազորման հայտ, որում նշվում են՝

1) հայտատուի անվանումը.

2) իրավաբանական անձի գրանցման համարը, իսկ ֆիզիկական անձի համար՝ հաշվառման համարը.

3) իրավաբանական անձի գտնվելու վայրը, իսկ ֆիզիկական անձի համար՝ հաշվառման վայրը.

4) հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն.

5) տեսալսողական ծրագրի անվանումը.

6) հայտը ներկայացնելու ժամանակաթիվը.

7) հայտատուի ստորագրությունը:»:

Հիմք ընդունելով տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրությունը, ինչպես նաև վերոգրյալ իրավական հիմնավորումները՝ Հանձնաժողովն արձանագրում է.

Հեռարձակողը տեսալսողական հաղորդումները հեռարձակելիս պարտավոր էր պահպանել Օրենքում ամրագրված դրույթների պահանջները:

Քննարկվող համատեքստում հատկանշական է, որ Ընկերությունը Հեռարձակողի կարգավիճակ ստանալու համար 2024 թվականի նոյեմբերի 05-ին Հանձնաժողով է ներկայացրել հեղինակազորման հայտ, որում, ի թիվս օրենքով սահմանված այլ տեղեկությունների, ներկայացրել է նաև Օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի դրույթով պահանջվող տեսալսողական ծրագրի հայերեն անվանումը, այն է՝ «Ալֆա Նյուզ»:

Հանձնաժողովի 2024 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 98-Ա որոշմամբ Հեռարձակողի հեղինակազորման հայտը բավարարվել է, և վերջինիս տրվել է տեսալսողական մեդիածառայություն մատուցողի կարգավիճակ (հեղինակազորման վկայագրի սերիան, համարը՝ ՀՎ № 067, իրավաբանական անձի պետական գրանցման համարը՝ 286.110.1287390), որը կազմում և սպառողին է ներկայացնում տեսալսողական տեղեկատվություն և խմբագրական պատասխանատվություն է կրում տեսալսողական արտադրանքի բովանդակության համար:

Հեռարձակողը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելն առաջացնում է իրավական հետևանքներ, և ի թիվս այլնի, Հեռարձակողը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների կիրարկման ապահովման համար:

Տվյալ դեպքում Հեռարձակողը պարտավոր էր պահպանել Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դրույթը:

Այսպես, հիմք ընդունելով օրենքների դրույթները և ձեռք բերված փաստերը՝ արձանագրում ենք, որ

Հեռարձակողի կողմից 2025 թվականի նոյեմբերի 12-ի էկրանային ցուցադրման ժամանակ «ԱԼՖԱ ՆՅՈՒԶ» տեսալսողական ծրագրի անվանումը նշվել է օտար լեզվով՝ «alpha news», առանց հայերեն տառադարձության:

Հանձնաժողովն ուսումնասիրել է Հեռարձակողի կողմից ներկայացված պարզաբանումները և բացատրությունները, ըստ որոնց՝ Հեռարձակողը հայտնել է, որ հաշվի առնելով այն, որ 2024 թվականի հոկտեմբերի 10-ին ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակից ստացված ապրանքային նշանի գրանցման No 40675 վկայագրում չկա հայերեն տառադարձությունը, ապա դիտարկել և տեղադրել է Ընկերության ապրանքային նշանն այնպես, ինչպես գրանցված է վկայագրում: Միաժամանակ հայտնել է, որ նկատի ունենալով օրենսդրական կարգավորումները՝ էկրանային ցուցադրման ժամանակ տեղադրված անվանումը փոփոխել և լրացրել է Հանձնաժողովի 2025 թվականի նոյեմբերի 14-ին թիվ Ե/04/04.1/910-25 գրությամբ ներկայացված ծանուցմանը համապատասխան, ինչպես նաև կցել է ապացույցը սկավառակով, սակայն նշված բացատրությունները բավարար հիմք չեն կարող հանդիսանալ Հանձնաժողովի կողմից Օրենքի դրույթներով սահմանված իրավախախտումը չարձանագրելու և Ընկերության նկատմամբ վարչական պատասխանատվության միջոց չկիրառելու համար:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Հեռարձակողը փաստացի ընդունել է իրավախախտման փաստն առ այն, որ էկրանային ցուցադրման ժամանակ Ծրագրի անվանումը նշվել է օտար լեզվով՝ «alpha news», առանց հայերեն անընդհատ տառադարձության՝ չպահպանելով Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը՝ Օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

1) գրավոր նախազգուշացում,
2) տուգանք,
3) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության կասեցում,
4) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

Օրենքի 57-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է.

«Հեռարձակողների անվանումները էկրանային ցուցադրման ժամանակ միայն օտար լեզուներով՝ առանց հայերեն անընդհատ տառադարձության օգտագործելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.02 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:»:

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը, 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 23-րդ կետերը, 6-րդ հոդվածի 3-րդ մասը, 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 14-րդ կետերը, 42-րդ հոդվածի 1-ին, 8-րդ և 9-րդ մասերը, 43-րդ հոդվածի 1-ին մասը, 55-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և ղեկավարվելով Օրենքի 57-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ԱԼՖԱ ՄԵԴԻԱ ՀԱՈՒԶ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել Օրենքի 57-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված վարչական տույժը՝ տուգանելով 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ԱԼՖԱ ՄԵԴԻԱ ՀԱՈՒԶ» ՍՊ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2025թ. դեկտեմբերի 12
ք.Երևան